



ԱՐՏԱԴՐՈՂԻ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ

ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

Սույն տեղեկանքը մշակվել է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության համար «Հայաստանում թափոնների կառավարման քաղաքականություն» 4-ամյա ծրագրի տեխնիկական աջակցության շրջանակներում, որն իրականացնում է Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) Յակոբեան բնապահպանական կենտրոնը: Ծրագիրը ֆինանսավորվում է Շվեդիայի կողմից:

Սույն տեղեկանքում ներկայացված հասկացությունների սահմանումները միջազգային փորձի հիման վրա մշակված նախնական տարբերակներ են:



ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայաստանի բնակավայրերում տարեկան առաջանում է շուրջ **700,000 տոննա** կոշտ կենցաղային աղբ: Գոյացող աղբի մեծ մասը հեռացվում է ներկայումս շահագործվող շուրջ **300 աղբանոց**:

ՀՀ մի քանի բնակավայրում մասնակի ներդրված **թափոնների տեսակավորման** համակարգերի շնորհիվ հավաքվում է երկրում վերամշակելի թափոնների (ապակու, թղթի, պլաստիկի, մետաղի) ողջ ծավալի ոչ ավելի քան 5%-ը: Դրանց մեծ մասը (մոտ 95%-ը) **տեսակավորվում է** ոչ ֆորմալ խմբերի կողմից՝ **հենց աղբանոցներում**:

ԱՂԲԱՆՈՑՆԵՐՈՒՄ ԹԱՓՈՆՆԵՐԻ

ՏԵՍԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԿՈՂՄԵՐԸ

- անբավարար սանիտարահիգիենիկ և աշխատանքի անվտանգության պայմաններ
- մթնոլորտային արտանետումներ
- ստվերային գործունեություն
- անկառավարելի հրդեհների ռիսկեր
- թափոնների աղտոտում և արժեզրկում
- երկրում թափոնների վերամշակման ցածր ցուցանիշներ

ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ

Արտադրողի ընդլայնված պատասխանատվության (ԱԸՊ) ներդրմամբ ԱԸՊ ապրանքներ արտադրողները կամ ներմուծողները կկրեն պատասխանատվություն այդ ապրանքի **ողջ կենսացիկլի** համար՝ արտադրությունից մինչև հատուկ թափոնների էկոլոգիապես անվտանգ գործածություն: ԱԸՊ ապրանքների և հատուկ թափոնների ցանկերը սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ:

ԱԸՊ ներդրումը կնպաստի ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով ամրագրված **«աղտոտողը վճարում է» սկզբունքի կիրառմանը**, որի շնորհիվ գոյանում են հատուկ թափոնների տեսակավորված հավաքման և հետագա էկոլոգիապես անվտանգ գործածության համար անհրաժեշտ ռեսուրսներ:

ԱԸՊ ներդրումը նաև կխթանի **ապրանքների նախագծման** փուլում սակավաթափոն, մատչելի, ծախսարդյունավետ և էկոլոգիապես անվտանգ լուծումների ընտրությունը, օրինակ՝ ավելի հեշտ վերամշակվող փաթեթավորում:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱԸՊ ՆԵՐԴՐՈՒՄԸ ԿՕԳՆԻ

- խթանել երկրում վերամշակման արդյունաբերությունը և բարձրացնել վերամշակման ցուցանիշները
- նվազեցնել աղբավայր հեռացվող թափոնների ծավալները և դրանց մշասակար ազդեցությունները
- ապահովել հատուկ թափոնների էկոլոգիապես անվտանգ գործածության համար ինստիտուցիոնալ և ֆինանսական լրացուցիչ ռեսուրսներ
- թեթևացնել ՏԻՄ-երի՝ թափոնների կառավարման բեռը
- խթանել թափոնների կառավարման ոլորտում զբաղվածության բարձրացումը
- անցում կատարել դեպի շրջանաձև տնտեսություն
- իրագործել պատասխանատու սպառման և արտադրության մոդելներ, որն ամրագրված է ՄԱԿ-ի Կայուն զարգացման 12-րդ նպատակով
- պայքարել կլիմայի փոփոխության և դրա ազդեցությունների դեմ, որն ամրագրված է ՄԱԿ-ի Կայուն զարգացման 13-րդ նպատակով

ԻՆՉՊԵՍ Է ԳՈՐԾՈՒՄ ԱԸՊ ՍԻԵՄԱՆ

ԱԸՊ սխեմաների հիմնական իրականացնողն են **Արտադրողի պատասխանատվության կազմակերպությունները (ԱՊԿ)**, որոնք հիմնադրվում են տվյալ ԱԸՊ ապրանքի առնվազն երկու խոշոր արտադրողների կամ ներմուծողների կողմից: Տվյալ ԱԸՊ ապրանքի բոլոր արտադրողները և ներմուծողները իրականացնում են իրենց ԱԸՊ պարտավորությունները կամ անհատական ձևով, կամ որևէ ԱՊԿ-ի միջոցով՝ վերջինիս վճարելով ԱԸՊ վճար և գնելով նրա ծառայությունները:

ԱՊԿ-ն լիազոր մարմինից ստանում է **թույլտվություն** և իր պարտավորությունները իրականացնելիս **հաշվետու է** նրան: Լիազոր մարմինը նաև սահմանում է հատուկ թափոնների **վերամշակման թիրախներ** և մշտադիտարկում է ԱՊԿ-ի կողմից դրանց ապահովումը:

ԱԸՊ վճարներից գոյացող միջոցներն ուղղվում են բացառապես հատուկ թափոնների **էկոլոգիապես անվտանգ գործածությունը** կազմակերպելուն՝ ըստ սահմանված վերամշակման թիրախների:

ԱԸՊ ապրանք (արտադրանք) են հանդիսանում այն ապրանքները, որոնց սպառման կամ օգտագործման արդյունքում գոյանում են հատուկ թափոններ: ԱԸՊ ապրանքների և հատուկ թափոնների ցանկերը սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ:

Հատուկ թափոնի խմբերը կարող են ներառել տարայի և փաթեթավորման, մարտկոցների և կուտակիչների, շահագործումից դուրս եկած տրանսպորտային միջոցների (ՇԴԵՏՄ), էլեկտրական և էլեկտրոնային սարքավորումների (ԷԷՍ) թափոններ, ինչպես նաև անվադողերի, օգտագործված յուղերի, օդի և յուղերի օգտագործված զտիչներ, լուսավորային վահանակների, տեքստիլի և այլ թափոններ: